

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևավայրով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Թ. Ս. ՈՒՂՅԱՆՈՎ



ՊԱՀՊԱՆԵՑԵՔ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԻՈՒՆ

636
ԱՀ-77

ԳՐԱԴԱՐԱՆ
Института
ВОСТОКОВОДЕННИЯ
Академии Наук
СССР

ՀՐԱՄԱՐԿՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՄԱՅԻՆ ԿՈՎԿՅՈ»
ՈՂՈՏՈՎ-ԴՈՆ

1932

32-1K

ՎԱ 489

636
Խ-77

Պ. Ս. ՈՒՅՑԱՆՈՎ

24 SEP 2010

ՊԱՀՊԱՆԵՑԵՔ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԻՈՒՆ

Թարգ. Հ. Բող.

ԳՐԱԴԱՐԱՆ
Института
ВОДНОСЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՐԱՄԱԿՁՈՒՅՑՈՒՆ «ՀՅՈՒԽԱՅԻՆ ԿՈՎԿԱՆ»
ԹՈՍՏՈՎ-ԴՈՆ
1932

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զիու նշանակությունը, նույնիսկ այն պայմաններում, յերբ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմքում տրված և հաստատում մեքենա-արակտորային բազան, չափազանց մեծ է:

Գյուղատնտեսության մի քանի աշխատանքների համար ձիու քաշուժի կիրառումը վճարյան թույլատրելի յե, այլև թելադրված և ծայրահեղ անհրաժեշտությունից. նույնքենական քաշուժից գերազանց յե, վորովհետեւ գեռ և նա թե ավելի եժան և և թե ավելի ենանտու յե:

Գյուղատնտեսության մյուս ճյուղերում ևս, ինչպես արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության և այլ ճյուղերում, ձիու քաշուժի պահանջը նույնպես չափազանց մեծ է:

Ցանքսի տարածությունների ընդլայնումը, գյուղատնտեսական արտադրանքի մեծացումը, հողամշակման ու ցանքսի բնագավառում ազբուտիխնիկայի նոր մեթոդների կիրառումը, արդյունաբերության ու շինարարության հրական աճումը—այս բոլորն ավելացնում են քաշուժի բերնվածությունը, պահանջում են նրա քանակական աճումը և աշխատանքի վրակական բարելավումը: Մեքենականի հետ զուղնթաց աճում և կենդանի քաշուժի, ձիու պահանջը, հարկագոր և ունենալ ամրակազմ, ուժեղ և առողջ բանվորական ձի՝ վորպես անհրաժեշտ քաշուժ: Յեզ ձիու անպետքության մասն գործարակությունը խոսակցությունները,

թե շատ մոտ ժամանակներում մեքենական քաշուժն առաջարեղից դուրս և մղելու ձիուն, վոչ այլ ինչ են, յեթե վոչ բացարձակ արտացոլումը կուլակային աղիտացիայի, վոր ուղղված և կոլտնտեսային արտադրությանը վկանելու համար: Ձիու քաշուժի թերագնահատումը, վոր տակավին գոյություն ունի շատ կոլտնտեսություններում, բանվորական ձիու պահանջնաման ու ոգտագործման նկատմամբ գոյություն ունեցող գիմազրկությունը, խայտառակորեն՝ հոդված վերաբերմունքը գետի մարուկների (մատղաշ ձիերի) հոդվածի արակությունը, իսկ յերբեմն ել նրանց լիովին խնամադրկումը, մատակների մասսայական անպատճեն մնալն ու վիժումը, ձիու պահանջնաման վերաբերյալ անասնաբուժական-սանիտարական, ինչպես նաև անասնա-առողջապահական նվազագույն պահանջների թերացումն,—այս ամենը ծայրահեղ բացառական ազդեցություն են ունենալում տնտեսության դրության վրա և ավելացնում են քաշուժի գժվարությունները, մանավանդ գյուղատնտեսական աշխատանքների լարված շրջանում, գարնանացանի ու բերքահավաքի շրջանում: Զիու գերի և նշանակության մասին կան կառավարչական մի շարք վորոշումներ:

«ԽՍՀՄ-ի պահանջների բավարարման համար պետք յեղած հացանատիկի, հումութիւն և կերի մշակությանը անհրաժեշտ քանակությունը կարող է կույթների անհրաժեշտ քանակությունը յերբ արակուրի արտադրյալ միայն այն գեպօռում, յերբ արակուրի հետ միաժամակ պահպանվի նաև ձիու քաշուժը թե հողամշակման և թե բեռներ կրելու համար և այդ քաշուժն ողբարործվի ավելի լավ: Քանի անհատական տնտեսություններում: Ձիու քաշուժի վատնումը խորհուրդների համարում է համապատասխան համարում և վորպես արտացոլում կուլակային ազդեցության և առաջարկում և խորհրդային լինանության բոլոր կազմակերպություններին վճռական պայքար մղել այս յերկույթի գետը:

(Խորհրդային համամիուրենական 6-րդ համագումարի կոլտնտեսային շինարարության մասին և համապատասխան պահպանական պայքարը մղել այս յերկույթի գետը):

Վոչ վոք չի կարող և իրավունք չունի արդարանաւու, թե նա չգիտե ձիու ունեցած նշանակությունը: Ձիու վերաբերմամբ յեղած անտնտեսավարությանը պետք և վերջ տալ: Կոլտնտեսություններին և խորհտնտեսություններին՝ ձիու քաշութիւ այդ հիմնական մատակարաններին ու գլխավոր սպառողներին՝ հարկավոր ե բոլշեիկյան լիակատար համառությամբ վճռական բեկում ձեռք բերել ձիով աշխատանքի գործում, վերջ դնել ձիու խնամատարման և ոդտագործման ասպարեզում գոյություն ունեցող դիմագրեկությանը, սովորել կանոնավոր կերպով մեծացնել ժատղաշներին (մըտրուկներին), խնամքով վերաբերվել ծանրած մատակարաններին, առիթ չտալ նրանց հարկագրական վիճումներին, հասնել բեղմնավորման և ծննդաբերման առավելագույն չափերի, ձեռք բերել ձիերի մահացման տոկոսի նվազում: Յեվ սրանով իսկ ստեղծել ձիատնտեսության նորմալ աճման ու զարգացման հարկավոր պայմանները, տալ կոլտնտեսություններին իսկապես ամրակազմ, ուժեղ, դիմացկուն և առողջ ձի:

Թե ինչպես ե հարկավոր տնտեսավարի ու կանոնավոր կերպով պահպանել և ոդտագործել ձիուն, պատմվում է այս գործույթի մեջ: Կոլտնտեսականներին անհրաժեշտ ե ուշադրությամբ կարդալ այս գիրքը և բոլոր ցուցմունքները կենսագործել:

ՁԻԱՆՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆՑ ԿԱՌՈՒՅՑՈՒՄԸ, ՍԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Յերբ ձիերը արոտատեղիներում չեն, պետք և ձիանոցներում տեղավորված լինեն: Զիանոցներ շինելու համար պետք ե ընտրել քիչ-շատ բարձր տեղեր, ճահիճներից հեռու, ինչպես և հեռու այն տափարալներից, վարոնք առատ հն վոչ հոսուն ջրերով. մեկ խոսքով այնպիսի տեղեր, ուր ձիերի վարակիչ հիվանդություններ չեն նկատվել, ուր չեն յեղել անսառւնութիւ գերեզմաններ, աղբանոցներ և այլն, Զիանոցը ձմեռը պետք ե տաքպահի կենդանուն, իսկ ամառը պահպանի նրան շողից: Դրա համար ձիանոցն այնպիս պետք ե շինել վոր նրա ճակատակողմը գեպի հյուսիս չնայի: Այսպիսի ձիանոցը ձմեռը խոնավ կլինի ու պաղ, իսկ ողը միշտ խեղդուկ: Ավելի լավ և ձիանոցները շինել ճակատով գեպի հարավ և հորավ արևմուտք:

Զիանոցներ կարելի յե շինել քարից, աղյուսից կամ հարդից, լավագույն են համարվում աղյուսից կամ փայտից շինվածները. ավելի հժան կոստեն քարից և հարդից շինվածները, սակայն այս վերջիններն անպատճառ ներսից ու դրսից սվաղած պետք ե լինեն և քարի կամ աղյուսի հիմք ունենան: Հիմքի և վորմի միջև անհրաժեշտ ե ջուր չանցկացնող մի շերտ դնել (տոլ և այլն) — սրանով վորմերը զերծ են մնում հողի ջրերի վեր ծծվելուց:

Զիանոցների արտաքին յերկինեղի գուները չպետք ե շինվեն ախրող քամիների կողմէց:

Դոների լայնքը պիտի լինի 2,1 մետրից վոչ պակաս, իսկ բարձրությունը — 2,5 մինչև 2,8 մետր: Զիանոցի վորմի բարձրությունը լինելու յե 2,8-ից մինչև 3,5 մ: Յուրաքանչյուր ձիանոց պետք ե կառուցվի այն հաշվով, վոր «մեջը տեղավորվեն թանկարժեք աղնվացեղ արտազրողներ ու մատակներ վոչ ավելի, քան 60 գլուխ»:

Տոհմի աղնվացնող ձիերի ախրոները ներսից բաժան-

ված պիտի լինեն լցցիկների և 2,5 մետր լայնությամբ ընդհանուր միջանցքը ունենան: Ամեն մի խցիկի յերեք պատերըն ել վոչ լուսամուտ և վոչ ել դուռ պիտի ունենան և միայն միջանցքի կողմի պատի վերի կողմի մեկ յերրորդ մասը պետք ե վանդակապատ լինի—ոդի և լույսի ազատ հոսանքի համար Խցիկները շինվում են 3,5 մ. յերկարությամբ և 3,5 մ. լայնությամբ, վորպեսզի ձին կարողանա աղատորեն շուռ գալ ու պառկել: Խցիկների դռները միափեղկ են լինելու՝ 1,2 մ. լայնությամբ ու բացվելու յեն դեպի միջանցքը, իսկ ձիանոցի դռները—գեպի դուրս:

Այն ձիանոցներում, վորոնք հատկացված են բանող ձիերի համար, խցիկներ շինվում են տվյալ ձիանոցում տեղափորված ձիերի միայն 10 տոկոսի համար. ձիանոցի մնացյալ մասում միջնորմներ չեն շինվում և ձիերին կանգնեցնում են մեկը մյուսից 1,5 մ. հեռավորության վրա ու իրարից բաժանում են կախովի ձողիկներով, վորոնք ամրացված են շղթաներով, ձողիկների այն ծայրը, վոր գտնվում է ձիու զվարի կողմը ավելի բարձր պիտի լինի, իսկ վոտքերի կողմինը—ցած: Զիու յուրաքանչյուր կայան (станок) պիտի ունենա 3 մետրից վոչ պակաս յերկարություն. կայաններից դուրս, 2,5 մետրից վոչ պակաս լայնությամբ անցք պետք ե լինի՝ միջանցքի նման:

Լույսը կենդանուն տալիս ե թարմություն, կենդանություն, յեռանդ, զարգացնում և տեսողության ուժը, նպաստում ե որգանիզմի զարգացմանը: Խավարն, ընդհանկառակը, նպաստում ե թուլությանը, կենդանու թմրածությանը, ճարպի զոյացմանը: Մյուս կողմից եւ չափազնդ պայծառ լույսը, վոր անմիջապես ընկնում է ձիու աչքերին, վնասակար ե—դրանից խանգարվում է տեսողությունը: Այդ պատճառով թե ազնվացեղ և թե բանող ձիերի ձիանոցներն ունենալու յեն բավականաչափ լույս: Իրեւ կանոն, բանվորական ձիանոցների պատուհանից ներս թափանցող լույսի մակարդակը պետք ե հավասար լինի հատակի մակարդակի 1-14 մասին: Ազնվացեղ ձիերի ձիանոցներում

լուսամուտների մակարդակը պետք ե կազմի հատակի 1,12 մասը: Լուսամուտներից լույսը ձիանոց պիտի թափանցի կամ ձիու հետեւի կողմից, կամ կողքից, բայց վոչ յերբեք ուղղի ձիու աչքերի մեջ, և անպատճառ դիխավերեվից, իսկ ավելի լավ ե—առաստաղից:

Չիախցիկների և ձիանոցների հատակները մեզի ու գագերի համար անթափանցիլի պիտի լինեն: Նրանք անթափանցիկ պետք ե լինեն գետնի պեսպես արտաթորումների համար: Մյուս կողմից հատակները բավականաչափ կակուղ պետք ե լինեն վոտքերի համար, իսկ ձմեռները չպետք ե պաղ լինեն: Թափանցիկը ինչպես և անհարթ, արանքներ ու ծակեր ունեցող հատակները նպաստում են մեզի ծծվելուն, վորը խառնված լինելով կերի կրծոտանքների և աղբի հետ, անցնում և հատակի տակը և աստիճանաբար զոյացնում է վարակի բռյան, այսպիսի ձիանոցներում կանգնած ձիերը կարող են հիվանդանալ՝ մըսելուց առաջ յեկած և վարակիչ հիվանդություններով: Ավելի վատ են համարվում քարի, աղյուսի և ասֆալտի հատակները, նրանք թափանցիկ են մեզի ու գագերի համար, ձմեռը պաղ են, և կենդանին չի ունենում հանգիստ և փափուկ պառկելու տեղ: Ավելի տաք և փափուկ են փայտի հատակները, բայց նրանք շատ թանդարժեն և նույնպես ծծում են մեզը: Ամենաեժան և ամենալավ հատակը, վոր ոգտավետ ե ձիու վոտքերի համար և ընդհանրապես մյուսներից ավելի համապատասխան և բուլոր պահանջներին, գա կավածեփ (կավը կտրտած ծղոտի հետ խառնած), լավ տափտափված հատակն ե, վորը սակայն տարին 1-2 անգամ հիմնական վերանորոգման պետք ունի: Կալածեփ հատակներն ամեն որ պետք ե ավելի, մեզից թրջված տեղի վրա չոր ավաղ ցանել, տափտափել և շտկել սմբակներից զոյացած փոս տեղերը:

Չիանոցներում սովորաբար հատակը թեքված ե լինում գեպի ձիու գավակի կողմը, վորպեսզի մեզը դյուրությամբ հոսի գեպի այն ակոսածե խողովակները, վորոնք հատակապես շինված են ձիախցիկներից կամ ձիակայանքներից դուրս:

Հատակի թեքվածքը 4—5 սմ. ավելի չպիտի լինի, դրանից ավելին վասակար ե. յերբ ձիու մարմինի ամբողջ ծանրությունը փոխադրվում ե գեղի հետևի վոտքերը, դրանից նրա վոտքերն ու մեջքը հոդնում են. իսկ հզի մատակները, մասնավանդ իրենց հողության վերջերին, կարող են հեշտոցի ու արգանդի տեղախախտումն ունենալ. նրանք կարող են նույնիսկ վիժել. Յեթե կավածեփ հատակներ ունեցող ձիախցիկներն ու ձիակայանքները ժամանակին և ինամքում մաքրվեն, հավաքվեն և նորոգվեն, այն ժամանակ իսպառ ավելորդ ե դառնում թեք հատակներ շինելը:

Զիանոցների առաստաղները պետք ե տախտակամած լինեն, առանց արանքների ու ճեղքերի:

Զիանոցի ողը պետք ե լինի սիշտ մաքուր և թարմ. Դրա համար անհրաժեշտ ե ամեն անդամ ողտպիլ ձիերի բացակայությունից և ձիանոցի ողը մաքրել. Իսկ յեթե ձիերը ձիանոցումն են մնում, ողն այնպես պետք ե մաքրել վոր միջանցիկ քամի չլինի և մըսելու պատճառով ձիերը չիվանդանան:

Զափազանց տաք ձիանոցներում ձիերը թուլակազմ և փափկասուն են դառնում, իսկ պաղ ձիանոցներում—ընդհակառակը, ձիու մարմինը ավելի պաղելու պատճառով՝ նըրան տաքացնելու համար հարկավոր ե ավելի կեր տալ բացի դրանից մըսելուց առաջ յեկած հիվանդանալու գեղաքեր ել են տեղի ունենում: Դրա համար ձիանոցների ողի սորմալ շերմաստիճանը լինելու յե $10-12^{\circ}$ Ցիլինդր կամ $9-10^{\circ}$ Ռուգ: Այն ձիանոցներում, ուր կանգնած են մատակները, նրանց ծնելուց հետո առաջին $1\frac{1}{2}-2$ ամիսը ողի շերմաստիճանը պիտի լինի $13-15^{\circ}$ Ցուգ կամ $10-12^{\circ}$ Ռուգ:

Ձիանոցներում ողը թարմ ու մաքուր պահելու համար հարկավոր ե ողափոխիչներ շինել: Ամեն մի 10 ձիու համար շինվում է $1\frac{1}{2}$ մետր տրամագիծ ունեցող փայտաշեն, քառակուսի ողահան խողովակ: Մեկը մյունի մեջ հազգրած յերկու խաչաձև տախտակներով՝ խողովակը ներսից չորս

մաս և բաժանվում Խողովակի վերի ծայրը փակ եւ Այդ վերի ծայրից վոչ հեռու, խողովակի չորս կողերի վրա, միմյանցք ե բացվում: Նման ողափոխիչների շնորհիվ քամու հոսանքի տակ գտնվող ողանցքից թարմ ողն աղատութեն ներս և խորժությունը համար աղանցքից հաջողությամբ ուրու և քաշվում ձիանոցի ողը:

Մաքրությունը ձիակայանքներում և ձիանոցներում—ձիերի առողջության գրավականն ե: Դրա համար անհրաժեշտ ե, վորպեսզի ձիանոցներում վոչ կեղտ լինի և վոչ ել փոշի, զումաղը և բորբոս: Առողջապահական անհրաժեշտ պահանջները պահպանած լինելու համար պետք ե մաքրել ձիանոցների աղը, մեղը, պատերի և առաստաղի փոշին ավելի որական 1 անգամից վոչ պակաս. տարին 2—3 անգամ ել պատերը կը ուղիտակացնել իսկ ձիանոցների ու ձիախցիկների տախտակի պատերը և այլ մասերը մոխրացով (պելօք) լվանալ:

Անողայման հարկավոր ե ձիու համար, մանավանդ գիշերները, տակի փափուկ փովածք պատրաստել: Թաց փըսածքի տեղ պետք ե թարմը փոել: Փովածքի համար գործ են ածում հարդ կամ սոճու սողոցուկներ, վորոնք նպաստում են ողի մաքրությանը և դյուրությամբ ծծում են մեղք: Զիու տակ փոելու հարդի նորմալ քանակը բանող ձիու համար 1 և կիս—2 կգ, ե, չափահաս ցեղայինի համար—3 կգ., մար 1 և կիս—2 կգ, ե, չափահաս ցեղայինի համար—5 կգ, վորովհետև հզի մատակի համար—մինչեւ 5 կգ, վորովհետև հզի մատակը իր տակը փոված հարդի մի մասը (մինչեւ 1 կգ.) սովորաբար ինքն ե ուսումն:

Ձիակայանքի կամ խցիկի մի անկյունում շինվում է վարսակի արկղը կամ տաշը, վորն ամրացվում ե պատին՝ հատակից 85—100 սմ. բարձրության վրա կամ մոտավորապես ձիու արմունկին հավասար իսկ խոտի մասը շինում էն 30—35 սմ. բարձր վարսակի արկղից: Վարսակի արկղի հարմարագույն ձեզ հատված կոնի ձեն ե, վորի վերի կողմըն ունի 60 սմ. լայնություն, ներքինը—30 սմ. և խորքը 30 սմ.:

Եժանության, դիմացկունության, անթափանցելիության և հարմարության, ինչպես նաև մաքրելու, լվանալու և ախտահանելու տեսակետից կերի լավագույն արկը՝ համարվում են չուզունից, հաստ յերկաթից (ավելի լավ ե ցնկած յերկաթից) կամ յերկաթապատ փայտից շինվածները։ Ավելի լավ ե այդ արկղները շինել կախովի, քանի թե պինդ պատին ամրացված։ Զիուն կեր տալուց հետո արկղը պետք ե մաքրել ու լվանաւ, իսկ ավելի լավ ե դուրս հանել ձիանոցից։

Այս մարուկների (քուռակների) համար, վորոնց՝ իբրև լրացուցիչ սնունդ՝ տալիս են նաև հացահատիկ, արկղները պետք ե կախել 48—50 սմ. հատակից բարձր։ Մատակների (մանավանդ ցեղայինների) համար խոտի մսուրներն ավելի լավ ե շինել ուղղակի հատակի վրա։ Զին, մանավանդ մատղաշ հասակում, խոտ ուտելու ժամանակ կուանալով, ուղղում և ամրացնում ե իր մեջքը։

Զիանոցներին կից գտնվող բակերը և կայարանները պետք ե սաքուր պահպեն։ Բակի մակերևույթը պետք ե հարթ լինի, առանց խորառությունների, փոսերի ու խանդակների։ Բակը չպետք ե բռնված լինի աղբով, քարեցով, գերաններով, յերկաթով, յերկաթաթերով և այլն, վորպեսզի ձիերի վոտներն ու մարմնի այլ մասերը զերծ մնան վնասվելուց՝ նրանց շրջեցնելու, զրոսանքի հանելու և վարժելու ժամանակ։ Զիանոցից հանված աղբն առնվազն 100 մ. հեռու պիտի կրվի սայլով։

Ծծից կտրելու հասակի (6 ամսական) և ավելի մեծ մարուկների համար այսպիսի ձիանոցների կառուցումը շատ թանգ և նստում։ Ավելի հժան կլինի, յեթե նրանց համար ձիանոցների փոխարեն ընդհանուր և տաք ախոռներ կառուցվեն։ ախոռներից յուրաքանչյուրում պետք ե տեղավորել ծծից կտրածներին 15 հատից վոչ ավելի մեծ հասակի մտրակներին 10—10 հատ, հաշվելով յուրաքանչյուր ծծից կտրվածի համար 2,1 քմ. հատակի տարածություն, իսկ մեծ հասակի մտրուկների համար—նույն տարածության 4,5 քմ.։

1 1/2 և ավելի տարիք ունեցող մատղաշ հովատակները մատղաշ մատակներից առանձին պետք ե պահպեն։

ՁԻՈՒ ԽՆԱԱՐ ՏԱՆԵԼԸ

Պետք ե ծանոթ լինել ձիու բնավորությանը, նրա սրվորություններին, նրա առողջական վիճակին։ Հարկավոր ե խելացի մոտեցում ունենալ ձիուն, ինչպես նաև սիրալիք, համբերատար և միաժամանակ հաստատակամ վերաբերմունք դեպի նա։ Անհմուտ և կոպիտ վերաբերմունքը վնասում ե ձիուն։

Մաերումը։ Բոլոր ձիերը՝ թե ցեղային և թե բանող՝ յերբ նրանք արոտավայրում չեն, այլ գտնվում են ախոռում, անպատճառ պետք ե մաքրվեն։ Անմաքուր վիճակում պահպող ձիու մորթը փոշակալվում է, ծածկվում ե թիփով, քրտնքով, վորի հետեւանքով խանդարվում ե կաշվի միջոցով շնչառությունը և կասեցվում ե նյութերի փոխանակում կաշվի մակոտիների միջոցով։ Բացի սրանից, մաքրումն անհրաժեշտ ե նաև նրա համար, վոր նա առաջ ե բերում արյան ուժգին հոսանք դեպի կաշին և կաշվի ուժգին սնուցում։ Մաքրումը պետք ե կատարել վոչ ձիախըցիկում, վոչ ախոռում կապված տեղը և վոչ ել միջանցքում, այլ բակում։ Շատ մեծագին ձիերին (ցեղային արտադրիչներին և զամբիկներին) պետք ե մաքրել որը յերկու անգամ (առավոտ և յերեկո), բանող ձիերին—որը մեկ անգամ վոչ պակաս կիր տալու ժամանակ մաքրումը կատարել չի կարելի։ Մաքրումը պիտի կատարվի կամ մինչև կիր տալը, կամ կերից հետո 1-2 ժամ անցած։ Կիրած ժամանակ ձիուն մաքրելն ավելորդ անհանգստություն ե պատճառում նրան։ Բացի զրանից, մարսողական որդաններից դեպի կաշին մղված հոսանքը թուլացնում ե մարսողությունը։

Զիուն կարդի բերելու և մաքրելու համար պետք ե հետեւյալ պատկանելիքներն ամեն մեկ ցեղային ձիու համար—մեկ հատ մազի խոզանակ, մեկ հատ քերիչ, 2-3 վոլորած

հարդ, քաթանի փալաս (փափուկ) աչքերը սրբելու համար, մի կտոր քաթան կամ մահուղ՝ խողանակով մաքրելուց հետո ձիուն սրբելու համար, մի բթածայր կեռ կամ փայտի գանակ՝ սմբակները մաքրելու համար: Մաքրման պարագաների մի կոմպլեկտ ել հարկավոր եւ ունենալ յուրաքանչյուր բանող ձիուն համար, համենայն դեպս 2-3 ձիուն համար մեկ կոմպլեկտից վոչ պակաս: Ձիուն խնամատարության այս բոլոր առարկաները պահիվելու յեն հատուկ արկղ—պահարանում և ուրիշ ձիերի մաքրման համար չպետք եւ գործադրվեն:

Մաքրումն սկսելուց առաջ ձին պիտի կապվի կարճ սանձով: Մաքրումն սկսում են դլիսց ու պարանոցից՝ 3-4 անդամ խողանակով հետ ու առաջ սանրելով ձիուն մազը (բուրդը): Դրանից հետո քերիչով մաքրում են խողանակը իսկ քերիչը թափ են տալիս: Յեթե ձին շատ եւ թափալիք ու կեղտոտվել, նախապես հարկավոր եւ հարդի փնջիկով սրբել-մաքրել բոլոր կեղտը: Կաշվին կպած ու չորացած կեղտերն ու աղբերը զգուշությամբ մաքրում են քերիչով և ապա շիելով սրբում են հարդե ծգուտով: Հատկապես զգուշ պետք եւ լինել գլուխը, փորը և վոտների վարի մասերը քերիչով մաքրելու ժամանակ, վորպեսզի մորթի վրա վերը չբացվի, վորը ապա կեղտոտվելով՝ բորբոքումն առաջ բերի: Ավելի լավ եայդ մասերը մաքրելու ժամանակ քերիչ իսպառ չգործածել այլ լվանալ տաք ջրով (լավ կլինի սապոնով), իսկ հետո սրբել հարդե ծգուտաներով և քաթանի փալասով՝ մինչեվ չորանա:

Գլուխը, պարանոցը, իրանն ու վոտները մաքրելուց հետո անցնում են ճակատի փնջիկին, բաշին և ագիին: Յեթե մաղերն իրար են կպել, պետք եւ ջրով թթվել, բաժանել իրարից և ապա ցանցառ սանրով սանրել:

Մաքրումը վերջացնելուց հետո, ձիուն, նրա գլխից սկսած, սրբում են թաց մահուղով կամ քաթանե փալասով՝ մաղերին փայլ տալու համար: Մի ուրիշ մաքրուր և փափուկ քաթանի կտորով ել աչքերն են սրբում: Ձիուն կոճի յերկար մաղերը չպետք եւ խուզեն, վորովհետեւ կոճի մա-

կերը բնական պաշտպան են հանդիսանում՝ կաշին զերծ պահելու համար վարակից, կեղտից և ցրտից: Կաշվի հիվանդություններում պիտի կաշին առաջանակածության վերաբերում միայն (խոնավախտ, եքղեմ և քորախտ) կոճի մաղերը մի քիչ խուզվում են անասնաբուժից ցուցմունքով:


Սմբակների խնամումը: Մաքրումը վերջացնելուց հետո պետք եւ աչքե անցնել սմբակները և յերկաթե կեռով կամ փայտե գանակով մաքրել ներբանի աղբն ու կեղտը: ապա թաց լաթով սրբել մինչեվ կոճը, հետո չոր լաթով սրբել կոճերի տակը, և գրանով վերջացնել ձիուն մաքրման ամենամեծ տակը, և գրանով վերջացնել ձիուն մաքրման ամենամեծ տակը: Պետք եւ աչքե անցնել սմբակներն ու բողջ աշխատանքը: Պետք եւ աչքե անցնել սմբակներն ու բողջ աշխատանքը: Պետք եւ աչքե անցնել սմբակներն ու բողջ աշխատանքը: Պետք եւ աչքե անցնել սմբակներն ու բողջ աշխատանքը:



Եթուոտ և խոնավ յեղանակներին: Այդ անել հարկավոր և խոնավախտով և եքղեմայով հիվանդանալու առաջն առնելու համար: Զայտ տած սմբակներն անհրաժեշտ եւ ամիսը վոչ պակաս քան 2 անդամ տովբրիչով և սմբակի դաշտակով մաքրել և տեղտեղ շտկել, թե չեն կարող են դոյանալ յեղջուրի տնկանոն ջարդվածքներ ու ճեղքեր և կստացվի արատավոր սմբակ՝ կոճի վոսկրի անկանոն թեքվածքով:

Հզի մատակների սմբակների դաշտակով կամ տովբրիչով մաքրումը պետք ճեղքերը: Եթաղարեցնել ծնելուց 1 և կես ամիս առաջ, իսկ հետագայում մաքրումը կատարել արթին 3-4 անդամ, իսկ հետագայում մաքրումը կատարել արթին (մարտ-մայիս), գայլից վոչ պակաս, այն եւ ծնելուց հետո (մարտ-մայիս), գայլից կեսին (հուլիս-օգոստոս) և աշնան վերջերը (նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներում), յերբ ձին արոտավայրից արթեր-դեկտեմբեր ամիսներում), յերբ ձին արոտավայրից արթերին ձիանոց և փոխադրվում: Մտրուկների սմբակների մաղերին ձիանոց անգամ պետք եւ կատարել 7-8 ամսական հասակում:

Բանող ձիերն աշնան և ձմեռվա ամիսներում անպատ-



Նկար 2. Կոճում
սեղմած սմբակը.

յեղքները պետք ե ուղղվեն և մաքրվեն: Ենթանն ու սըմբակի յեղքները մաքրելիս չպետք ե տուրքիչով մաքրել և սղցել սմբակի յերեսի գլազուրը, դրանից սմբակի յեղքաշերտը դառնում ե չոր, փխրուն, դյուրաբեկ և ճեղքեր ունենալու տրամադրված:

Չոր ու գյուրաբեկ սմբակայեղջյուր ունեցող բանով ձիերի խցիկների հատակները փայտից, քարից կամ աղյուսից չպետք ե շինվեն: Դրանից սմբակն ավելի ևս չոր ու փխրուն ե դառնում: Այդ տեսակ ձիերի համար ամենալավը կավածեփ հատակն ե, վոր պետք ե մաքրուր պահվի, լինի չոր ու հարթ, առանց փոսերի ու խորդուրդերի: Չոր ու գյուրաբեկ սմբակայեղջյուր ունեցող ձիերին հանձնարկում ե դիշերչա հանգստի ժամերին նրանց կանգնեցնել թաց կավաճողի վրա կամ տակը ծառի սղցուկ փուել:

Սմբակի պահպանմանը լով խնամք չտանելու, նրա յեղքները անժամանակ ու անկանոն ձեվով չափազանց շատ կտրելու, այլ և կրնկամասի սլաքիկն ավելի խոր տաշելու հետեվանքով, ինչպես և պայտի հետեվի կողմից բարձր պայտասեղերի պատճառով, բանով ձիերի սմբակներն անկանոն ձեվ են ստանում, սեղմվում են կոճում: Այս պիսի պակասություն ունեցող ձիերը շարժվելիս ցավ են զդում և զրա համար ել շուտ են հոգնում: Այս պատճառով ամեն մի կոլտնահսական, վոր ամբացված ե ձիերին, հատուկ ուշադրությամբ պիտի հետեվի, վոր բոլոր բանով ձիյերի սմբակները ժամանակին և ինչպես հարկն ե մաքրվեն համուսնի ձեռքով և վոր պայտերը կոռաւմ նեղ չլինեն, սա-



Նկար 3, Տափակ սմբակ.

ա.—սմբակի կոտրվող յեղունքը,

բ.—ճեղքվածք, վորը համուսնի սմբակի յեղքներին.

շ.—ներբանը կակուղ և գուրս ցցված.

նամակնդ այն գեպօւմ, յերբ ձիու սմբակը կոճում սղմված ե: Այսպիսի պակասավոր սմբակ ունեցող ձիերին ավելի լավ և աշխատեցնել փափկանող վայրերում և պայտել կամ առանց հետեվի պայտասեղերի, կամ ամենալավ սեղմերով: Գիշերային հանգստի ժամանակ այսպիսի ձիերին ոգտավետ ե կանգնեցնել ձիանոցում կավածեփ հատակի լրա, սմբակներին ել կավի լուծվածք քսել:

Դիմացկուն տեսակի (բիտուգների, արտղավազների

և այլն) բանող ձիերն ունենում են տափակ սմբակներ, այսինքն սմբակների ներբանը կակուղ ու դուրս ցցված է լինում: Այսպիսի ձիերի համար կարծի հողի վրա աշխատելը դժվար է և ցավ է պատճառում: Դրա համար տափակսմբակ ձիերին պետք է աշխատեցնել միայն պայտած: Այն ձիերին, վորոնց սմբակի տափակությունն ուժեղ է արտահայտված, պետք է պայտել խուլ պայտով կամ պայտի ու ներբանի մեջտեղը թաղիքի միջաղբանք դնել:


Սմբակների վրա վորուել խոց, ջարդվածք, քերծվածք ու վերք նկատելիս, յերբեք չպետք է հուսաւ վոր դրանք իրենք իրենց կանցնեն. փոխանակ դրա վրա հույս դնելու, անհրաժեշտ է խոցը, ջարդվածքը ու վերքը մաքուր ջրով լվանաւ չոր ու փափուկ կառողով կամ խծուծով լավ սրբել և վիրավորված տեղին յոդ քսել: Յերբեք չպետք է մոռանալ, վոր սմբակի վերքը, ժամանակին ողնություն չհասցնելու դեպքում, կարող է սմբակի բորբոքում և թարախակալում առաջ բերել և ձին, վորպես քաշող ուժ, կամ ժամանակավորապես շաբքից դուրս պիտի գա, կամ ավելի ևս վատ, կարող է ընդմիշտ կորցնել իր աշխատունակությունը:

Զիածածկոցների գործածությունը: Յուրաքանչյան յեղանակներին կամ սաստիկ հողմերի ժամանակ, յերբ ձին աշխատանքից վերադառնում է, նրան անհրաժեշտ է ձիածածկոցով ծածկել: Զին աշխատանքից վերադառնալուց հետո ըպետք է իսկույն հանել նրա ձիասարքը (անուրը, թամքը կամ մեջքի թամրիկը), թե չե մորթի քրտնքած մասերը հետեւյալ որը կուռչեն և շատ ցավոտ կդառնան: Զիասարքը հանելու դեպքում պետք է իսկույն ձիու ամբողջ մարմինը և հատկապես լծասարքի տակ յեղած մասերը խնամքով տրորել-շիտի կամ հարզի փնջիկով: Պաղ և քամոտ յեղանակներին, տրորել-շիտի կամ հարզի փնջիկով: Պաղ և քամոտ յեղանակներին, տրորել-շիտի կամ հարզի փնջիկով:

յե քրտնեցնում և ձիու հովանալը դանդաղեցնում, վորի հետեւականքով ձին կարող է պաղ առնել և հիվանդանալ:

Զրելը, Անհրաժեշտ և ձիուն ջրել իր ժամանակին և հարկավոր չափով. Ջրի պակասությունն ազդում է ձիու առողջության վրա: Ձիուն պետք է ջրել պաղ (12-15⁰ ջելսիով կամ 8-12⁰ մետրով), հստակ հոսող ու վճիռ ջրով: Ջուրը չպետք է ունենա հոտ, կողմնակի համ և վնասակար խառնուրդ. բացի գրանից, ջուրը կրային կամ այլ աղերի շատ խառնուրդ ևս չպիտի ունենա: Ձիերին չպետք է ջրել այն գետերից և կանգուն լճերից, վորոնք բնակարանների, Ֆձիանոցների, գերեզմանաների ու աղբանոցների մոտ են Օգտանվում. այդպիսի գետերն ու լճերը ոսվորաբար վորակ ված են լինում ամեն տեսակի աղտեղություններով: Ձիերին կարելի չե ջրել նաև ճամիճներից: Ձրելու համար ամերին կարելի չե ջրել պահանջվությունը կամ խորունկ փորված արտեղյան ջրհորների ջուրն և չամենայն գեղս, ջրի աղբյուրները նախանալը պետք է նային ու բակտերիոլոզիական և քիմիական հինտաղուման յենթարկվեն:

Ձիերին ջրելու համար պետք է հատուկ դույլ ունենաւ, ծայրահեղ գեղքերում միայն կարելի յե ոգտվել ջրատաշտակով, վորն ամեն ջրելուց հետո պետք է լավ ցայտի: Ուրիշ տնտեսության պատկանող ձիերին ընդհանուր ջրատաշտակից ջուր տալն արգելվում է: Զի կարելի նաև ջրատաշտակից ջուր քաշել այն գույլերով, վորոնք հատկացված ջրհորից ջուր քաշել ան գույլերով, վորոնք հատկացված են ձիերին ջրելու համար: Ամեն մի ջրհոր պիտի ունենա պետք է իսկույն աղբյուր: Զրով տականներն ու տաքարները (չափանիքները) պետք է խուփով լավ ծածկված լինեն. Ջրելուց հետո կարող է պետք և տաքարով կամ տաքարը պետք է պարպել, չորացներ նորից լցնել մաքուր ջրով և խուփով ծածկել: Զանաները ձիերին շատ պաղ, ջրհորից նոր քաշած ջուր տալ շի կարելի: Դրա համար, ջրելուց 1-2 ժամ առաջ պետք է լցնել տաքարը կամ տակարը, վորպիսզի ջուրը տաքարնա: Զիերին պետք է ջրել որը 3 անգամ առավոտը, կեսուրին և յերեկոյան, իսկ ամառաւ սպակին + նաև գիշերը և



անպատճառ հացահատիկային կեր տալուց 20-30 ըոպե առաջ՝ Յեթե ջրելու տեղը ձիանոցից հեռու յե, ձիերին պետք ե ծանրաքայլ քշել դեպի այստեղ, իսկ ջրելուց հետո, մանավանդ ձմեռը, պետք ե վազցնելով քշել, վորպեսզի ձին կարողանա տաքանալ:

Բանող ձիուն, քանի նա դեռ տաքացած ե ու քրտնած, աշխատանքից դալուց հետո 2-3 ժամից առաջ չի կարելի ջրել, այսինքն մինչև վոր քրտինքն անցնի, չորանա, իսկ այդ կարելի յե իմանալ շոշափելով նրա աճուկները, բաշի և ականջի տակը:

Աշխատանքի ժամանակ մի քիչ ջուր կարելի յե տալ ձիուն, սակայն ջրելուց հետո իսկույն ել հարկավոր ե նըրան քշել արագությամբ, վորպեսզի տաքանա: Քրտնած ձիուն վարսակ կամ գարի արվելու յե աշխատանքից դառնալուց 2-2 և կես ժամ անցնելուց հետո միայն:

Ատամների սղօցումը: Կոլտնտեսության այն ձիերը, վորոնք կերը լավ չեն ուտում կամ որեցոր, առանց վորյեղի պատճառի, նիշարում են, պետք ե զննության յենթարկվեն և հատկապես նրանց բերանն ու սեղանատամի յեղոները: Հաճախակի այդ ատամներն ունենում են սուր ծայրեր և վերք են պատճառում այտերի ներսից: Այդ դեպքում ձին դժվարությանը ե ծամում, հետեւվաբար և քիչ ե ուտում:

Ատամների սուր ծայրերը հարկավոր ե տովրիչով սըղոցել և այն ժամանակ ձին կսկսի լավ ուտել:

Իսկ յեթե բերնում ատամի պատճառած վերքեր չեն նկատվում, բայց ձին կերը լավ չի ուտում, չի լավանում և նիշարում ե, դա նշանակում ե, վոր ձին մի ուրիշ լուրջ հիվանդություն ունի: Այս դեպքում անհրաժեշտ ե հրավիրել անասնաբույժ:

Չիերի լողացումը ամառվա շողերին հոսող ջրի մեջ ոդտավիտ ե: Լողացնել կարելի յե առավոտ և յերեկո, կեր տալուց մի ժամ առաջ կամ ուտելուց մի ժամ հետո: Լողացնելու տանելու ժամանակ ձիերին չպետք ե վազեցնել,

այլ քշել ծանրաքայլ, իսկ լողացնելուց հետո—թեթև վազցնելով: Աշխատանքից տաքացած ու քրտնած ձիուն լողացնել կարելի յե միայն աշխատանքից 2-3 ժամ հետո: Լողացնել կարելի յե 10-15 ըոպեյի չափ, վոչ ավելի:

Յեթե լողանալուց հետո ձին դողումեև կանգնած և զզգված մորթով, թույլ ու տխուր, դա նշանակում ե, վոր լողացումը նրան վնասում ե և այլևս չպետք ե լողացնել: Լողացումից հետո, յերբ ձին բերվում ե ձիանոց, նրան հարկավոր և մինչև չորանալը սրբել ու մաքրել:

Լծասարքի խնամումը: Զիասարքի լծասարքի խնամումը պետք ե կատարվի նույնպես խնամքով ու լրջությամբ, ինչպես և իրեն՝ ձիու խնամումը: Կոլտնտեսություններում աշխատող ձիերի մեջքի, բաշի ներքեվի մասի և այլ տեղերի վերքերի ու քերծվածքների պատճառած մասսայական ցավագարությունը բացառապես հետեւվանք ե այն բանի, վոր լծասարքը կարգին զբարված և ձիուն հարմարված չի:

Ուստի, վորպեսզի լծասարքի պատճառով ձին չփչանա, իրենվ կանոն անհրաժեշտ և ամեն մի ձիու համար ունենալ լավապես սարքած ու տվյալ ձիուն կատարելապես հարմարեցրած և նրան ամրացված լծասարքի մի ամբողջական կոմպլեկտ (ձիու անուր, այսինքն խոսուտ, թամբիկ՝ իր քրտնաքաշով, անրափոկ և այլն): Ամբողջ լծասարքը պարբերաբար պետք ե աչքի անցկացվի, նորոգվի, չորացվի և ձյութվի կամ ուրիշ ճարպով յուղվի: Կոլտնտեսություններում՝ լծասարքի խնամումը պետք ե հանձնվի ձիուն ամրացված կոլտնտեսականին:

ՁԻԵՐԻ ԽՆԱՄՄՈՒՄՆ ԱՐՈՏԱՎԱՅՐՈՒՄ

Յերբ ձիերն արոտավայրումն են, առանձին խնամքի պետք չունեն: Բայց և այնպես, ամեն առավոտ պետք ե ուշագրությամբ աչքի անցկացնել բոլոր ձիերին, զոկել հիվանդներին ու վատ արածողներին, ուղարկել նրանց անասնաբուժարարն կամ կանչել անասնաբուժին: Առանձնապես ուշագրությամբ պետք ե լինել հզի մատակների յերամակին: Յե-

թե յերամակում կան կեղտոտված ձիեր, նրանց անհրաժեշտ և մաքրել:

Մարուկների խնամքը պետք եւ կատարվի այնպես, ինչպիսի խնամք ունենալու եյին նրանք ձիանոցում պահպանելու ժամանակ:

Այն ձիերը, վորոնք գիշեր-ցերեկ խոտ են արածում և աշխատանքից բոլորովին ազատված են, յեթե խոտն առատ եւ ու ջուրն ընտիր, լրացուցիչ կերի պետք չունեն: Ծծից կարելու հասակից (6 ամսական) սկսած մինչև 2 տարեկան մատղաշներ, բացի արածելուց, պիտի ստանան նաև լրացուցիչ կեր: Այդ լրացուցիչ կերի որական չափը կախված է հասակից և յուրաքանչյուր քուռակի առանձնահատկություններից (տես՝ սննդաբավարարման նորմաները):

Հղի մատակներին նույնպես տրվում եւ լրացուցիչ կեր վոր կախված եւ յուրաքանչյուր մատակի առանձնահատկություններից (տես՝ կերակրման նորմաները—չափերը):

ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Աշխատանքում իր վատնած ուժը վերականգնելու համար բանող ձին կերի պետք ունի: Այդպիսի կերը կոչվում է արդյունավետ կեր: Բացի սրանից, ձին իր կյանքը պահպանող ու անդադրում գործող ներքին որգանների համար սննդաբար նյութերի կարիք ունի: Այն ձին, վոր չի աշխատում, պետք ունի միայն կյանքը պահպանող կերի:

Կերի տեսակներն են՝ մեծածավալ կեր(խոտ, հարդ, մըղեղ), կենարոնացրած կեր (վարսակ, գարի, յեղիպատացուեն, թեփ, քուսայ) և հյութալից կեր (արմատապտուղներ, դալար խոտ): Զիերին տրվող կերի չափը տարրեր եւ և կախված է ձիու տեսակից (բեղնատար ձի, թեթեվ կառքի լծող ձի, հեծնելու ձի), հասակից, որգանիդմի առողջական վիճակից և այն բանից, թե ինչպես եղատագործվում նա:

Կերը պետք եւ լավորակ լինի ու մաքուր: Մքլուսած, փթած, փոշուակ կերը առաջանակում եր մեջ բոլոր անհրաժեշտ սննդաբար նյութերը և մարսվում եւ ուտելուց յերկու ժամ անց:

փչացած, թունավոր բույսեր և պեսպես վարակիչ հիվանդություններ պարունակող կերը ձիերին չպետք եւ արվիր: Այսպիսի կեր ուտող ձին բանվում եւ ստամոքսի և աղիք-ների սուր հիվանդությամբ, վորն ըստ մեծի մասին մահացու վախճան եւ ունենալու (աղիքների խիթ, ուժասպառող փորհարինք): Դրա համար ձիուն այս կամ այն կերը տալու համար պետք եւ ունենալ անասնաբուժի ցուցումները:

Խոտի և այլ կերերի մթերումը չի կարելի կատարել այն դաշտերում, ուր տեղի յեն ունեցել սիրելիական ախտով հիվանդություններ, տարափոխիկ վիճմունքներ, տարափոխիկ թոքերի բորբոքումներ: Կերը, մանավանդ հացահատիկայինը, անհրաժեշտ եւ պահել մաքուր շենքի մեջ (ամբարներում, շտեմարաններում): Միայն որվա կերը կարելի յեւ պահել ձիանոցում, բայց այն ել հատկապես շինված մթերունոցներում, կափարիչ ունեցող արկղներում: Խոտը պետք եւ պահվի փակ շենքերում կամ ժամանակավորապես շինված հարկերում. բացառիկ գեպքերում միայն խոտը կորելի յեւ լավ բարձած դեղերով պահել:

Կերի (լայնածավալ կամ հացահատիկային) որական բաժինը կարելի չե սի անգամից տալ ձիուն. այդ բաժինը հարկավոր եւ բաշխել Յ-4 անգամվա համար (առավոտը, կեռորին, յերեկոյան և գիշերը):

Բացի դրանից, անհրաժեշտ եւ, վոր ամեն անգամ կերը տրվի վորոշյալ ժամերին: Կերակրման այս յեղանակը շատ առավելություններ ունի: Կերը չի թափթփում և վլունատակ չի լինում, ու, բացի զրանից, ձիու ստամոքսը, վորոշ ժամանակում հարկավոր քանակությամբ մարտղական հյութեր արտադրելու վարժվելով, ավելի լավ և ավելի կատարյալ կերսորվ եւ մարսվում: Բնդվորում ձին ագահություն չի անում, հանդաբար և լավ ծամում եւ կերը, առատապես թրջելով այն իր թքով:

Կերի վորակը. Զիու բնական ու հիմնական կերը վարակն եւ: Նա պարունակում եր մեջ բոլոր անհրաժեշտ սննդաբար նյութերը և մարսվում եւ ուտելուց յերկու ժամ անց:

վարսակը, վորպես ձիերի կեր, գործ և ածվում նրանց կյանքի ամբողջ տեղողության ընթացքում: Ինչպես մատղաշ մտրուկներին՝ ծից կտրելու հասակից սկսած (6 ամսական), այնպես եւ ծերացած, անատամ, ուժասպառ յեղած, հիվանդ ձիերին վարսակը պետք և արվի արորած կամ խաշած ձեղով:

Մնացյալ ձիերի համար վարսակի այս ձեռով գործածությունը վնասակար և, վորովճետեվ նրանց մեջ զարգանում եւ վատառողջություն, դանդաղ կոտություն ու թուլություն. ձիերն ուժից ընկնում են և աշխատանքի ընթացքում արագ քրտնում են:

Յեթե ձին չափաղանց ագահությամբ և ճարակում վարսակը, պետքին պես չի ծամում նրան և աղրի հետ հաճախակի դուրս և թափում չմարսված հատիկները, այդպիսի պեղպօւմ լավ կլինի վարսակի հետ խառնել կտրտած ծղոտ (գարնանացանի հարդից): Ծղոտը շատ մանր կտրել պետք չե. նրա կտրները վարսակի յերկու հատիկի յերկարությունից կարճ չպետք ել լինի:

Զափաղանց կարեվոր ե պահպանել հետեւյալ կանոնը. թափով աշխատող ու շատ վարսակ ստացող ձիուն, իդեպս աշխատանքի ժամանակավոր դադարման (հանգիստ, հիվանդություն և այլն), անհրաժեշտ և նվազ քանակությամբ հացանատիկային կեր տալ, հակառակ պարագային նրա մեջ կարող են հիվանդություններ զարգանալ:

Վարսակի հունող պետք ե կատարելապես հասած լինի, ունենա գեղին գույն և փայլուն, վորորկ ու անբիծ կճեպ, լինի բոլորակաձև, խոշոր, փշածայրը կարճ, մքլած հոտ չպիտի ունենա նաև թարմ, գեռ նոր կալսած վարսակի կճեպն անփայլ ե. նրան կալմելուց հետո իսկույն վորպես կեր կարելի չե գործածել, թե չե ձին աղիքների հիվանդություն կունենա: Բներքահավաքից 2-3 ամիս հետո միայն կարելի յե այդպիսի վարսակը գործածել վորպես կեր: Բայց յեթե տնտեսության մեջ ուրիշ վարսակ չկա, իսկ ձիերին անհրաժեշտ ել լրացուցիչ կեր տալ, այդպիսի վարսակն ել

կարելի յե գործածել, միայն թե նրա մեջ անպայման պետք ե խառնել կտրտած ծղոտ:

Գարին իր սննդարարությամբ շատ մոտ է վարսակին: Գարին պետք ե լինի ծանրաքաշ, խոշոր, փայլուն, բացդղեղնագույն, վորորկ, անբիծ, մաքուր և մքլած հոտ չպիտի ունենա: Կոշտ կճեպ ունենալու պատճառով գարին ավելի դժվարությամբ և ծամվում և մարսվում, դրա համար ձիուն գարի տալուց առաջ հանձնարարվում ե տալ մի քիչ խոտ, հետո ջրել, և ապա արդեն՝ առնվազն մեկ ժամ անցած՝ տալ գարի, վորից հետո 2 ժամ շարունակ վոչինչ չտար, վորպեսզի գարին մարսվի:

Անխառն գարու գործածումը վորպես կեր հանձնարարելի չե, վորովհետև նա և ավելի յերկար և ավելի դժվար ե մարսվում: Ավելի լավ ե գարին տալ կոտորած-փշրած ձեվով, գարին լավ ե տաք ջրով խաչել և յերկու ժամից հետո մեկը և թե մյուսը, այն ժամանակ գարին պետք ե խառնել ծղոտի կտրտանացների հետ (չորս մաս գարի և կես մաս ծղոտի կտրտանաց):

Ձիերին գարի ուտելու պետք ե ընտելացնել աստիճանաբար: Այն բանով ձիերը, վորոնք գարիով են կերակըրվում, չպետք ե առանց աշխատանքի մնան. նրանց ամեն որ պետք ե աշխատեցնել: Այս պահանջների անտեսումը և գարու անզգույշ գործածումը (միանվագ մեծարածին կերը) հաճախ պատճառ ե դառնում ձիերի հիվանդության, այսինքն աղիքների խիթ, ստամոքսային-աղիքային մի շարք աղիքանդություններ, սմբակների ուեվմատիզմային բորբոքում, վունկների բռնվածություն իրենց հարակից հետեւ վանքներով ու բարդություններով:

Վորովհետև գարի ուտելուց ձիու որգանիզմի մեջ առաջ ե գալիս մի տեսակ թուլություն, դրա համար շատ մեծագին, աղնվացեղ ու տոհմ շարունակող հեծնելու ձիերին, ինչպես և հովատակ-արտադրողներին՝ նրանց բեղմնավորության կամպանիայի նախակատրաստման ժամանակա-

շրջանում ու նույն այդ կամպանիայի ընթացքում՝ գարու կեր տալը հանձնարարելի չե:

Յեզիփտացորենը ձիու ճարպի գոյացումն և առաջաց նում, մանավանդ նրա ներքին գործարանների վրա և զըլ խալորապիս սրտի մկանների վրա, նպաստում և քրտնքի արտադրմանը և թուլություն և առաջ բերում: Դրա համար յեզիփտացորենը, վորպես կեր, հանձնարարելի չե մեծագին արտադրողների և մատակ ձիերի համար: Բանող ձիերին յեզիփտացորեն կարելի յե տալ ըայց անպատճառ ժեծած-մանրացըրած ձեռվ, իսկ ավելի լավ և ալյուրի պես աղացած: Մեկ ձիուն որական կարելի յե տալ դաշտային շըջանում 3 կդ՝ յեզիփտացորեն, իսկ ձիանոցում պահպան ման շըջանում—1-1 և կես կդ:

Թեփը—ամենալավը ցորենինն ե: յեթե ցորենինը չկապետք և վերցնել զարութեալ և ծայրահեղ դեպքում հաճարինը՝ թեփը պետք և խոշոր լինի, չոր, առանց գունդերի ու չմըք լոտած: Զրի միջ վոր ածես, զուրը պետք և սպիտակին տա ափերիդ մեջ վոր տրորես—սպիտակ, ալյուրի գույն՝ փոշու հետք պիտի մնա նրանց վրա: Թեփը կերի համար գործածելուց առաջ անհրաժեշտ և աղի ջրով թրջել և խառնել մանրած ծղոտի հետ: Մեկ ձիուն որական 4 կիլոգրամից ավելի թեփի չպիտի տրվի, բայց այդ կախված և ձիու տեսակից: Թեթևաշարժ և թեթե կառքի լծվելու ձիերին—պակաս, ծանրաշարժներին—ավելի, ըստ վորում յերբեք թեփի մեջ վորեկե ուրիշ հացահատիկի, վորոնց թվում նաև վարսակի խառնուրդ լինելու չե, վորովհետեվ այդ դեպքում հացահատիկը վատ և ծամվում:

Թեփի յերկարատև գործածումը պակասեցնում և մարտողությունը, առաջացնում և փորհարինը, աղիքների խիթ, աղիքներում քարեր և գոյացնում կընդհանրապես չե բարձրացնում աշխատանքի ունակությունը: Դրա համար թեփը ջրախառն ձեվով գործ են ածում զիսավորապես հիվանդ թուլակազմ ձիերի համար և այն ել՝ ժամանակավորապես: Հանձնարարելի չե նաև արագ փոխանցումը թեփից դեպի

վարսակի կերը. փոխանցումը պետք և լինի աստիճանաբար, սկսելով վարսակի փոքր նորմերից: Հակառակ պարագային ձին հիվանդանում և աղիքի հիվանդություններով:

Կտավատի և կանեփի բուսպը, վոր իր մեջ պարունակում և մեծ քանակությամբ ճարպ, մանրացըրած և թըջած ձեվով և տրվում բանող ձիերին վորպես կեր, մեկ ձիուն որական կարելի յե տալ մինչեւ 1 և կես կիլոգրամ:

Գազարը, վորպես ժամանակավոր, լրացուցիչ կեր, շատ ուստավետ ե: Հանձնարարվում է դիմավորապես մարուկների, ծծից կտրած և ափելի մեծահասակների համար, ծիծ տվող մատակների, ինչպես և այն ձիերի համար, վորոնք հազում են, ախորժակ չունեն, թուլացած են և ստամոքսի խարբուխային հիվանդություն ունեն:

Գազարը տրվում և կտրած ու վարսակի, քուսպի և թեփի հետ խառնած. գաղարը պետք և կտրել բարակ ու յերկայնքին: Թեթևաշարժ և թեթե կառքերի լծվելու ձիերին, նայած նրանց տարիքին, տրվում ե որական 2-5 կդ. գաղար, իսկ ըետնատար ձիերին—մինչեւ 8 կդ. որական: Գործածել կարելի յե միայն մաքուր, չփթած ու չսառած գաղարը: Շատ թանգարժեք մատղաշներին գաղարը սովորաբար տրվում ե աշնանը, 1-2 ամիս:

Խոս: Ձիերի համար լավագույն խոտը դաշտայինն ե: Վորքան նուրբ ու բարակ լինեն խոտի ցողունները, վորքան շատ լինեն նրա մեջ ծաղիկներ ու տերեկներ, այնքան ավելի սննդարար և լինում նա: Ամենասաննդարարն այն խոտն ե, վոր բաղկացած և բազմատեսակ դալարներից և ճնձված և նրանց ծաղիկ տալու ժամանակ: Լավն այն ե, վոր խոտը շատ չոր չլինի, թե չե ծաղիկներն ու տերեկները կփշրվեն: Խոտը պետք ե ունենա բաց-կանաչ գույն, լավ բուրմունք. փթած ու բորբոսնած չպետք և լինի խոտը:

Յեթե խոտի մեջ շատ կորնդան կա, այդպիսի խոտը հնձելուց հետո անսիջապես կարելի չե իբրև կեր տալ ձիերին, վորովհետեւ կորնդանից ձիերը հաճախ զիսապտույտ են ունենում: Այդ տեսակ խոտերը, գործածելուց առաջ,

2—3 ամսի չափ պետք ե զիզված մնան, մինչև վոր կորնդանի սուրբ հոռը բավականաշափ դուրս գա: Առաջարարակ նոր հնձված ու դեղ արված խոտը վորպես կեր հանձնարարելի չե ձիերի համար: Անհրաժեշտ ե, վոր այդ խոտը 1—2 ամսի դեղերում մնա: Հակառակ՝ պարագայում ձին մարսողական գործարանների հիվանդություն կստանա: Խակ թե վոր կոլխոզի տնտեսության մեջ ուրիշ խոտ չկա և աշխատող ձիերին ստիպված են թարմ խոտով կերակրել, անհրաժեշտ ե նրա մեջ հին խոտ կամ դարձան խառնել:

Սակայն չպետք ե մոռանալ, վոր խոտը վորքան յերկար զիզված մնա, այնքան ավելի կորցնում է նաև իր մնադարարությունը, դառնում ե փոշիախառն և հազ ե պատճառում ձիուն: Ամենալատ խոտը ճահճուտ մարդագետիններում հնձվածն ե: Նրա մեջ զդալի տոկոս են կազմում բոշխը և այլ կծու ու թունավոր խոտերը (ճերմակ չքիտամի, ձիագի, ավելուկ, վայրի կակաչ, վայրի սոխ, ընձախոտ):

Ցանովի խոտերից լավագույնն են համարվում առվույտը, յերեխնուկը, ֆլենը, իշառվույտը:

Հարզը (միայն գարնանացանինը) տրվում ե ձիուն խոտ շինելու դեղքում կամ վորպես լրացուցիչ կեր: Սննդարարության տեսակետից ամենաընաիրը համարվում ե վարսակի և կորեկի հարդը, ապա գարու հարդը: Մրանցից վատ ե ցորենինը, իսկ ամենալատը հաճարի հարդն ե: Գարու հարդը իրեն ձիու կեր, հանձնարարելի չե, վորովհետեվ նա հեշտությամբ խոնավության ե յենթարկվում ու բորբոսնում ե, իսկ բորբոսնած հարդն առաջ ե բերում ձիու աղիքների խիթ և ուժասպառող վորհարինք:

Դալար խոտով կերակրելը տեղի յե ունենում ձիանոց: Ներում կամ հատուկ արոտավայրերում՝ ազատորեն արածելով: Դալար խոտը մեծ ուժ չի տալիս ձիուն: Դալար խոտ արածող ձին լարված աշխատանքից շուտ ե հոգնում և քրտնում: Բայց և այնպես, արոտի հանելը, վորպես ժամանակավոր միջոցառում, շատ ոգտակար է մանավանդ այն ձիերի համար, վորոնք ստամոքսի և աղիքների լորձաթա-

րանթի մնայուն բորբոքումն ունեն: ոգտակար ե և այն ձիերի համար, վորոնց սմբակները չոր են ու ճաքճաքվելու և կոտրվելու հակումն ունեն: Նման դեպքերում ձիերին արոտի հանելը բուժական ներգործություն ե ունենում նըրանց վրա:

Արոտի հանելը հատկապես ոգտավետ ե հեծնելու ազնը-վացեղ ձիերին և գլխավորապես նրանց մատղաշների համար: Դիմացկուն, յեռանդուն, արագավազ, ուժեղ և քաջառողջ ձի, վորն անհրաժեշտ ե թե գյուղատնտեսական աշխատանքների և թե հեծելազորքի լրացվան համար, մենք կարող ենք ունենալ միայն այն ժամանակ, յերբ նրա գոյության հենց առաջին որերից հնարավորություն տանք նրան ազատորեն շարժվելու բաց յերկնքի տակ:

Այն ձին, վորն իր մանուկ հասակից ամեն տարի, դարձնանը, ամառը և ձմեռը կերակրվում ե բաց յերնքի տակ և շնչում ե թարմող՝ զգալով իրեն բոլորովին ազատ, այդպիսի ձին մշտապես շարժողության մեջ լինելով՝ զարգացնում է իր մկանները, շնչառությունն ու վոսկրոտակաքը, բարելավում է իր սնունդը և նյութերի փոխանակումը, ամրացնում և վարժեցնում ե իր որգանիզմը յեղանակի և ողի պեսպես փոփոխություններին, արբունքի հասակում (3-4 տարեկան) դառնում և լիովին ընդունակ տանելու դիմուրական ծառայության մարտական պայմանները բոլոր արհավերքներն ու գժվարությունները, ինչպես նաև բոլորովին պիտանի յե դառնում գյուղատնտեսական աշխատանքների համար:

Յերբ ձին արածելու համար արոտավայր ե փոխարգվում, առաջին որը 1—2 ժամից ավել չպետք ե թողնել նրան այնտեղ: Յերկրորդ որը կարելի յե թողնել նրան արոտավայրում 4—5 ժամի չափ: Յերրորդ որը 6—7 ժամ և այլն: Այսպես աստիճանաբար պետք ե ավելացնել արոտավայրում արածելու տեխնոլոգիանը, վորպես ձին զերծ մնա ուժեղ վորհարինքից, վոր կարող ե պատահել ազատությամբ մեծաքանակ տալար խոտ ուտելուց: Զպետք ե նմանապես արոտավայր քշել ձիերին առավոտները շատ

կանուխ, քանի դեռ խոտը ծածկված է ցողով կամ յեղյա-
մով. չպետք է արածելու հանել նաև քամոտ յեղանակին
յերբ պաղ անձրեւ ե գալիս, Դա կարող է առաջացնել ձիե-
րի մեջ, մանավանդ հղի և ծիծ տվող մատակ ձիերի մեջ,
աղիքների ջղաճական խիթ, խոկ հղի մատակների մեջ—
նույնիսկ վիժմունք:

Արածելու համար պետք է հատկացնել չոր և բարձ-
րագիր արոտատեղիներ. ճահճային ու ցած տեղերը շատ
վնասակար են ձիերի, մանավանդ մատղաշ ձիերի համար.
մատղաշների սրբակներն անկանոն, տափակ ձեւ են ստա-
նում դրանից: Արևի ամենաստաք ժամերին ձիերի յերամակ-
ները պետք է արածացնել ծմակներում կամ անտառների
մոտերքը. իսկ յեթե արոտավայրում անտառներ չկան, ավե-
լի լավ կլինի այդ ժամերին ձիերին արածացնել բարձրադիրը
ու բաց տեղում, վոր քամին նրանց զովացնե: Այսպիսի տե-
ղերում ձիերն ավելի հեշտությամբ են տանում շողը, նը-
րանց պակաս են անհանգստացնում ճանճերը, բոռերը, իշա-
մեղուները: Արոտավայր քշված մտրուկների ագիները չպետք
է կորել թե չե նրանք զրկված կլինեն իրենց վրա հար-
ձակվող ճանճերին քշելու հնարավորությունից:

Յերբ ձին փոխադրվում է ձիանոց և կերակրվելու յի
դալար խոտով, այդ փոխանցումը նույնպես կատարվելու յի
աստիճանաբարը: Քաղած խոտն անհրաժեշտ և պահպանել
անձրենց և արևեց, գիղել փոքր կույտերով, վոր չտաքա-
նա և չթառամի. ընդհանրապես դալար խոտը կես որվանից
ավել չպետք է պահպի ուտելու չտրված: Ապա թե վոչ այդ
խոտը կակսի տաքանալ ու յեռալ, վորից ձիերը կարող են
ստամոքսի մուր հիվանդություն ունենալ: Զիւն դալար
խոտ տաքանց հետո իսկույն ջրել չի կարելի, ավելի լավ և
առաջ ջրել հետո կերը տալ: Ծանր աշխատանքից հետո ան-
միջապես ձիուն դալար խոտի փոխադրել չի կարելի: Անձ-
րենց թրջված դալար խոտը նույնպես կարելի չի տալ ան-
խառն կերպով. անհրաժեշտ և դարման խառնել նրա մեջ:

Հորդառատ մարդագետիններում քաղած. թարմ, հյու-

թալից խոտն՝ առանց դարմանի հետ խառնելու չի կարելի
տալ ձիերին. դա առաջացնում է փորի ուռչում, ուժասպա-
սող փորհարինք, հաճախակի միզաթափում և ընդհանրապես
ուժաթափ և անում ձիուն: Մեկուկես—յերկու ամսից ավել
չպիտի. տեսլի բանվորական ձիերի դալար խոտով կերակ-
րումը, յերբ նրանք պահվում են ձիանցում կապված:
Ավելի լավ և այդ անցկացնել ամառվա սկզբում: Զիւն 4
կիլոգրամից ավելի դալար խոտ տրվելու չե, այն ել պիտք
ե մաս-մաս տալ, 1—1½ ժամվա ընդմիջումներով:

Հանեալին նյուրեր. կենդանական որգանիզմի արյան
բաղկացուցիչ մասն և հանդիսանում աղը, հետևաբար նրա
ներկայությունը կերի մեջ անհրաժեշտ ե: Լինում են դեպ-
քեր, յերբ կերի մեջ աղը պակաս ե: Ուստի, վորպես
կանոն, ձիերի մեջ, մանավանդ դալար կերից չոր կերի
անցնելիս, շաբաթը 2—3 անգամ անհրաժեշտ ե սովորական
կերակրի աղ խառնել 9-ից մինչև 13 գրամ յուրաքանչյուր
ձիու համար (ձեր ձիերին ավելի, քան ջահելներին): Աղը
կամ վորպես փոշի ցանգում ե թրջած կերի վրա, կամ կտո-
րով տրվում ե կերամանի մեջ լիզելու համար:

Մյուս հանքային նյութերից առանձնապես ոգտավետ
ե փոսփորաթթվային կերը (փոսկրի փոշի), վոր նույնպես
ձիու որգանիզմի, մանավանդ նրա վոսկրոտիքի, բաղկացու-
ցիչ մասն և կաղմում: Դիտելով հաստատված ե, վոր մատ-
ղաշ ձին, վարի կերի մեջ աղը պակասում ե, դադարում է
անձրեւց, հիվանդանում է վոսկրախտով (ռախիտ), դրա հա-
մար մատղաների կերի մեջ այդ աղերը խառնելն անհրա-
ժեշտ ե: Ծծից կտրած մտրուկներին մինչև նրանց 2 տա-
րեկան հասակը կերի մեջ աղեր խառնել պետք ե 17 գրա-
մից վոչ ավել: Այդ հասակից վեր ձիերին, բացի հղի և ծիծ
տվող մատակներից, կերի մեջ փոսփորաթթվային կեր խառ-
նելու պետք չկա:

ՀՂԻ ՄԱՏԱԿՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆ- ՏԵՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Վորովինետև կոլտնահսություններում հարկավոր չափով քաշող ուժ չկա, յերբեմն ստիպված են լինում աշխատանքի համար ոգտագործել հղի մատակներին: Անհրաժեշտ է, վոր նման դեպքերում մատակներին թեթև աշխատանք տրվի, որինակ՝ տափանել, 160—240 կգ. բեռներ կը ենթակ տարածության վրա, լճել թեթև կառքերի՝ 8—10 կմ. ճանապարհ կտրելու համար:

Սրա հետ միասին չպետք ե մոռանալ, վոր ծանրած մատակն իր հղության առաջին կեսում կարող ե կատարել թեթև աշխատանք՝ առանց վօրենե վնաս հասցնելու առողջությանը. Ինչ վերաբերում ե հղության ընթացքի յերկրորդ կեսին, մեծ զգուշությամբ պետք ե աշխատանքի դնել նրան. Թույլատրելի չե հեծած արագ վաղցնել ինչպես և ծանր բեռներ կրել տալ ա, դ մատակներին:

Ծնելուց 1—1½ ամիս առաջ մատակներին տրվելու յի հանգիստ, վորպեսզի նրանք աղատորեն, բաց յերկնքի տակ, արածեն արոտավայրում: Ծնելուց մի շաբաթ անցած մատակներին կարելի յի արդեն աշխատեցնել: Յերր մատակի զուգավորվելու ժամանակը համար և նա հովատակի հետ զուգավորվի, նրան աշխատանքի գործածել կարելի յի հովատակից բաժանվելուց հետո 7 որից վոչ առաջ:

ԶԻԱՆՈՑՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՀՂԻ ՄԱՏԱԿԻ ԽՆԱՄՈՒՄԸ

Հղի մատակին հատկացված պիտի լինի ընդարձակ ձիախցիկ, վոր լինելու յի բափականաշափ տաք, լույս, չոր, առանց միջանցիկ քամիների: Այդ ժամանակամիջոցում մատակ ձին յենթարկվելու չե զարկի, հարվածի և հանկարծակի ուժեղ շարժումների: Այդ բոլորից կարող ե վիճակում առաջանալ: Ձիախցիկի հատակը միշտ պետք ե ծածն կված լինի չոր, սաքուր և փափուկ հարդով: Լավագույ-

սննդարար կերն ե տրվելու նրան, բայց պետք ե աշխատել վոր մատակը շատ չգերանա, թե չե ծննդաբերությունը կդժվարանա, ինչպես և չափազանց չնիհարի, վորովհենը նիհարությունը կարող ե պատճառ լինել պես-պես հիմանդրությունների, վորի հետեանքը կլինի վիժմունք կամ թուլակազմ, անզարդացած պառուղ:

Հղի մատակին պետք ե ջրել որական 5 անգամ և ջուր տալ ուղածին չափ, պետք ե հիշել միայն հետեյալ հիմնական կանոնը—վարսակ տալ ջրելուց կես ժամ և շատ պաղ ջուր չտալ, թե չե կարող ե վիժել:

Մատակին մաքրել ե հարկավոր խողանակով, որը 1—2 անգամ. փորի, կրծքի և մեջքի վրա չորացած կեղադպետք ե մաքրվի վոլորած հարդով (ժգուտով). քերիչ գործածելուց խսւափելու կաշին չդրդուելու համար:

Հղի մատակի սմբակները մաքրել զգուշությամբ, իսկ ծնելուց 1—5 ամիս առաջ սմբակների մաքրումը դադարեցնել խոպառ: Չստիպել մատակին, վոր հանկարծական դարձ կատարի իր խցիկում. ման ածելու ժամանակ չպետք ե նըրան հրել կամ հանկարծակի հարվածել չստիպել վոր խոչըրի վրայից ցատկի և այլն: Վարվել նրա հետ մեղմ, սիրելով և վոչ խստությամբ: Յերրորդից մինչև ութերրորդ ամիսը, ինչպես և 10-րդ ամիսը, յերբ սովորական ե մատակի վիժումը, պետք ե լավ հսկել մատակներին և վիժման դեպումը անասնաբուժին դիմել:

ԾԻԾ ՏՎՈՂ ՄԱՏԱԿՆԵՐԻ ԽՆԱՄՈՒՄԸ ԶԻԱՆՈՑՈՒՄ

Զիախցիկը, ուր տեղավորված ե մատակն իր մարուկի հետ, պետք ե մաքուր լինի և ընդարձակ ու առաջին շաբաթը վոչ շատ լույս. տակի փոփածքը պետք ե լինի չոր և առատ:

Ծննդաբերությունից հետո անմիջապես, մզանքը դուրս գալուց հետո, կեղտոտված ամբողջ փոփածքը մզանքի հետ միասին պետք ե խցիկից դուրս տարվի (այրվի կամ

2 մ. խորության մեջ թաղվի): Ծննդկանի հեշտոցը, ծծերը անհրաժեշտ ե տաք ջրով լավ լվանալ, հետույքի, ազգըների և պոչի կեղտերը մաքրել. ապա պետք ե մորը գլխին մուտեցնել նորածին մտրուկին՝ լիզելու համար, իսկ կես ժամից հետո—մոր պտուկներին: Ծննդաբերության առաջին որերը կերի չափը պետք ե պակասեցնել և վարսակի տեղի թեփ տալ, իսկ 5—6 որից հետո կերի քանակն ուժեղացնել: Ծննդուց 10—12 որ անց, թեփից անցնել վարսակի: Միաժամանակ հուրկավոր ե մատակի սմբակները մաքրել: Ծիծ տվող մատակին կարելի յև բանեցնել, բայց անհրաժեշտ վոր աշխատանքը թեթիւ լինի, կարճ տարածության վրա տուանց վազեցնելու:

ՄԻԾ ՈՒՏՈՂ ՄՏՐՈՒԿԻ ԽՆԱՄՈՒՄԸ

Մտրուկի տեսողությունը չփչոցնելու համար, նրա աշխարհ գալու առաջին որերում, խցիկում պետք ե կիսախամար լինի, իսկ հետո, 2 շաբաթվա ընթացքում, կամաց-կամաց լույսը պետք ե ավելացնել և հասցնել նորմալ աստիճանի: Առաջին իսկ որը մտրուկի ապարանին պետք է յոդ քսել և կապել ապա պորտատեղից 1—2 սմ. հետու կտրու և կտրած տեղը նույնապես յոդ քսել: Ծննդուց 1 և կես-ժում հետո մտրուկին պետք ե լիզմա անել տաք ջրով՝ մեջը գլեցերին խառնած (մեկ լիտր ջրին 1 թեյի դդալ) այն դեպքում, յեթե այդ ժամանակամիջոցում ինքը մտրուկը դուրս չթափի իր առաջին կղկղանքը: Այս անելն անհրաժեշտ ե՝ ստամոքսային-աղիքային հիվանդությունները կանինելու համար:

Կյանքի առաջին իսկ որերից մտրուկի հետ պետք ե վար վել սիրողաբար, շոյել նրան, յերբեմն ել քորել նրա մարմնի այն մասերը, վորոնց ինքը հասնել չի կարող, ականջներից չըաշել ինչպես և պոչից ու գլխից, չգրգռել, չչարացնել նրան. հաճախակի և փոխառվոլ բարձրացնել նրա վոտները, փայտի մուրճով մի քանի անգամ ներբանին խր-

փել—դրանով նա կամաց-կամաց կընտելանա ապագա պետք կակուզ յեղջուրները չկոտըել և պայտվելուն. սմբակների կակուզ յեղջուրները չկոտըել և չկտրել: Ծծից կտրելուց հետո մարուկին պետք ե կերակըել ավելի թանկագին մտրուկներին ավելի լավ ե կովի կաթ (մոտավորապես մի ամսի չափ), վարսակ և խոտ տալ: Այդ անել պետք ե, վորովհետեւ մատակն այդ ժամանակ արդեն նորից ծանրած ե և ունեցած կաթի մի մասը և սննդաբար հյութերը նա տալիս ե նոր պաղին: Կովի կաթ տալուց հետո անմիջապես վարսակ չպիտի տրվի մտրուկին, թե չե փորհարինք կունենա:

Մտրուկին ծծից պետք ե կտրել 6 ամսական հասակում: Այդ ժամանակաշրջանում մտրուկին իրենի կեր տաւիս են մանը կոտորած զուղար, վրան փոքր ինչ վարսակու խոտ ցանած: Խոտն անպատճառ պետք ե տրվի հատակի վրա դրված ամանից: Ծծից կտրելու առաջին շաբաթը որական արվում ե 3 կգ. գազար՝ յերեք նվազում, փոքրա-թեփի խոտի հետ փոխառփոխ: Ծծից կտրելու 2-րդ շաբաթից պաղարի հետ խառնում են ցորենի խոշոր թեփ, առաջ քեչ, հետո գազարի կեսի չափ, իսկ շաբաթվա վերջերին արգեն թեփի յեն անցնում: Ծծից կտրելու 3-րդ շաբաթից թեփի վրա ավելացնում են մի քիչ վարսակ՝ որական ընդունենիլ 1 կիլոգրամի չափ տալով: Մեկ աարեկան հասակում աստիճանաբար կերակրման նորման հասցնում են 2 կում աստիճանաբար կերակրման նորման հասցնում են 2 գրմ. վարսակի, 6 կգ. խոտի, կես կգ. թեփի, կերի վրա ավելացնելով որական 13 կգ. փոփոքրաթթվային կեր (վոսկ-րի փոշի): Վոսկրոտիքի պարգացման համար:

Ծծից կտրելու հասակից սկսած և դրանից մեծ, բոլոր մատղազ ձիերը, արոտավայրից ձիանոց փոխադրելիս, ձմեռները ամեները ամեն որ պետք ե գուրս հանվեն ձիանոցի պարսպապատ բակը՝ թարմ ոդ ծծելու: Բոլոր մատղազները պետք ե 3 խմբի բաժանվեն, ծծից կտրած և մինչ 1 տարեկանները—մի խումբ, մեկ տարեկանից վեր վորձ մտրուկները—յերկրորդ խումբ և մատակ մտրուկները մեկ տարեկանից վեր—յերրորդ խումբ:

ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ԱԶՆՎԱՅԵԼ ՀՈՎԱՏԱԿ-ԱՐՏԱԴՐՈՂ-ՆԵՐԻՆ ԶՈՒԳԸՆՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆԻՑ ԴՈՒՐ

Հովատակին մաքրել պետք ե այնպես, ինչպես վերն ապից: Կերակրումը կատարվում ե նորմերի համաձայն (տես սննդի նորմերը):

Յերբ հովատակ ձիով շրջագայություններ են կատարում, ըստ նորմայի նշանակված վարսակի, որական քանակի վրա անհրաժեշտ ե ավելացնել 1—2 կգ. Այս որը, յերբ հովատակը ողտագործված չե լծելու կամ հեծնելու համար, անհրաժեշտ ե առավոտը և կեսորին մեկ ժամի չափ վարժելով հանել նրան թամբած, նախ քայլելով, ապա թեթև վազքով:

Հատուկ ուշադրություն պետք ե նվիրել հովատակարտադրողին՝ զուգավորման սեղոնին պատրաստվելու ժամանակաշրջանում: Հովատակի կերակրումը հունվար ամսից սկսած այնպես պետք ե տանել, վոր նա լիովին պատրաստ լինի զուգավորման կամպանիային և 100 տոկոսով կարելի լինի նրան ողտագործել:

Հովատակ-արտադրողները կարող են ողտագործվել միայն թեթև աշխատանքի համար և կարծ տարածություն տնտեսու, 25 կգ.-ից վոչ ավելի յերթուղարձի համար:

Գյուղատնտեսական վոչ ծանր աշխատանքների համար ել կարելի յե ողտագործել հովատակներին, բայց ուրական 6 ժամից վոչ ավել իսկ փետրվար ամսից—որական 3 ժամ: Հովատակներին չպետք ե ծանր աշխատանքների բանեցնել: Հովատակ-արտադրողներին բանեցնել կամ լծած ու հեծած տեղ դնալ թույլատրվում ե միայն նրանց, ովքեր խնամում են նրանց:

ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ՀՈՎԱՏԱԿ ԱՐՏԱԴՐՈՂԻՆ ԶՈՒԳԸՆՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆՈՒՄ

